

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ՆՍՈՒՇՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 սեպտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին համաձայնագրում (կից վերապահումով և առարկությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2012 թվականի հունիսի 26-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին համաձայնագիրն ստորագրվել է 2011թ. հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում՝ ելնելով ԱՊՀ մասնակից պետությունների՝ 2000 թվականի նոյեմբերի 30-ի համանուն համաձայնագրի և ԱՊՀ մասնակից պետությունների՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառությանը հակազդող՝ 2002 թվականի հոկտեմբերի 7-ի հայեցակարգի նպատակներից:

2. Քննության առարկա Համաձայնագրի նպատակն է սահմանել անօրինական շրջանառությունից ազդրավված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգը՝ օպերատիվ հետախուզական միջոցառումների իրականացման, քրեագիտական համեմատական ուսումնասիրության անցկացման ապահովման համար, ինչպես նաև գիտական և ուսումնական նպատակներով:

3. Համաձայնագրի կատարման նպատակներից ելնելով՝ կողմերը համագործակցելու են իրավասու մարմինների միջոցով՝ անմիջականորեն, ինչպես նաև դիվանագիտական ուղիներով նամակների փոխանակման միջոցով: Այդ նպատակով համաձայնագրի բաղկացուցիչ մասը կազմող թիվ 1 հավելվածում նախատեսված է թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգը:

Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվելու է կողմերի իրավասու մարմինների՝ աջակցություն ցուցաբերելու նպատակով կատարված հարցումների հիման վրա: Այդպիսի հարցումների կատարման և դրանց հիման վրա ձեռնարկվելիք միջոցների իրականացման կարգը նախատեսված է Համաձայնագրի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներում:

Համաձայնագրում նախատեսված են նաև դրույթներ՝ հնարավոր վեճերի լուծման, Համաձայնագրի կատարման ընթացքում ծախսեր կատարելու, այլ միջազգային պայմանագրերից բխող իրավունքների և պարտականությունների կատարման, Համաձայնագրի ուժի մեջ մտնելու, գործողության ժամկետի վերաբերյալ:

Համաձայնագիրը բաղկացած է նաև թիվ 2 և թիվ 3 հավելվածներից, որոնցում համապատասխանաբար սահմանված են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հաշվառման քարտի, ինչպես նաև այդ նմուշների պիտակի ձևերը:

4. Քննության առարկա Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- իրականացնել օպերատիվ հետախուզական միջոցառումների, հետաքննության, քննչական գործողությունների ընթացքում առգրավված, ինչպես նաև այլ ճանապարհով ձեռք բերված թմրանյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնում Համաձայնագրով սահմանված ընթացակարգին համապատասխան,

- Համաձայնագրի՝ ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում որոշել իրավասու այն մարմինների ցանկը, որոնց վրա կդրվի դրա իրականացումը և այդ մասին տեղեկացնել ավանդապահին,

- ինքնուրույն կրել Համաձայնագրի իրականացման ընթացքում ծագող ծախսերը, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում:

5. Համաձայնագիրն ստորագրվել է կից վերապահումով և առարկությամբ, մասնավորապես.

- կապված՝ ՀՀ պետական սահմանով թմրամիջոցների և դրանց պրեկուրսորների նմուշների տեղափոխման, ինչպես նաև ՀՀ տարածքով դրանց տարանցման դեպքերում մաքսային հայտարարագիր պահանջելու իրավունք վերապահելու հետ,

- կապված՝ Համաձայնագրի դրույթները Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ կիրառելու հետ:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված՝ Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին համաձայնագրում (կից վերապահումով և առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

7 սեպտեմբերի 2012 թվականի
ՄԴՈ-1044